ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/26, 02.04.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Ֆիչըր» ՍՊԸ

Պատվիրատու՝ Կադաստրի կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Բլեդ և Ֆլեքս (Blade և Flex) սերվերների ընթացիկ տեխնիկական և ծրագրային սպասարկման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ անվավեր ճանաչել Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված «ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստից բոլոր որոշումները, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշումը և ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ֆիչըր» ՍՊԸ-ին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ
Ք. Երևան Մելիք Ադամյան 1

<<Ֆիչըր>> ՍՊԸ, ք. Աշտարակ Մաշտոցի փ. 61տ, ՀՎՀՀ05025975
Տնօրեն՝ Նարեկ Գագիկի Սարգսյան ն/ք. 012414017/

Կադաստրի կոմիտե, ք. Երևան Արշակունյաց 7

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18
Գնման առարկան՝ Բլեդ և Ֆլեքս (Blade և Flex) սերվերների ընթացիկ տեխնիկական և ծրագրային սպասարկման ծառայություններ

Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

Անվավեր ճանաչել Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստից սկսած բոլոր որոշումները, ինչպես նաև պայմանագիր կնքելու որոշումը և ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<Ֆիչըր>> ՍՊԸ-ին:

Ս/թ մարտի 30-ին Կադաստրի կոմիտեի կողմից հայտարարված ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել 2 կազմակերպություններ. <<Ֆիչըր>> ՍՊԸ-ն և <<Նամլոք>> ՍՊԸ-ն: Ըստ փաստացի ներկայացված հայտերի՝ <<Նամլոք>> ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան, մասնավորապես.

1) Հայտի ապահովում փաստաթղթում /հավելված 3/ բենիֆիցարի հաշվեհամարը լրացված չէ, որի հետևանքով, ըստ ՀՀ պետական գնումների մասին օրենսդրության, մասնակցի հայտը ենթակա է մերժման կամ առնվազն՝ շտկման՝ հաշվի առնելով օրենսդրական մեղմացումները:
2) Հաշվի առնելով, որ մասնակցի Հայտի ապահովման փաստաթղթում, որը ներկայացված է բանկային երաշխիքի (հավելված 3) ձևով բացակայում է բանկի կողմից որևէ հաստատում, ավելին՝ բանկի հաստատման համար նախատեսված դաշտում մասնակիցը լրացրել է անձնական տվյալներ, սույն թաստաթուղթը չի կարելի ընդունել որպես օրինական փաստաթուղթ կամ բանկային երաշխիք: Այսպիսով հանձնաժողովը պարտավոր էր հայտի ապահովում չներկայացնելու հիմքով մերժեր մասնակցի հայտը:

Բացի վերոնշյալ փաստերը, մենք փաստում ենք, որ ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի թիվ2 արձանագրությամբ որոշվել է գնահատման նիստը հրավիրել մարտի 31-ին ժամը 15-ին, սակայն հրավիրվել է մարտի 31-ին ժամը 10-ին: Նշված չհիմնավորված շտապողականությունը և վերոնշյալ խախտումները կասկածի տեղիք են տալիս, մասնավորապես՝ հանձնաժողովի կողմից ստորագրված շաբերի բախման բացակայության հայտարարության հավաստի լինելու վերաբերյալ:

Հաշվի առնելով, որ չկա օրենքով նախատեսված կարգով ընթացակարգը չկայացած հայտարարելու որևէ հիմք, առաջարկում ենք ԿԿ-ԳՀԾՁԲ-21/18 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել <<Ֆիչըր>> ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գին ներկայացրած մասնակից:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Խախտվել են ՀՀ գնումների մասին օրենքի **Հոդված 32-ի, Հոդված 34-ի, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման 31-րդ կետի դ ենթակետի, 40-րդ կետի բ ենթակետի, 41-րդ կետի, 43-րդ կետի պահանջները**:

Բողոքին կից ներկայացվում են ապացույց հանդիսացող փաստաթղթերը:

«Ֆիչըր» ՍՊԸ
ք, Աշտարակ, Մաշտոցի փ. 61տ
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570064836120100
ՀՎՀՀ՝ 05025975
Տնօրեն՝ Նարեկ Սարգսյան

Հարգանքով՝

«ՖԻՉԸՐ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԵԿ ՍԱՐԳՍՅԱՆ

02.04.2021թ.